Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը և կերպարվեսի մեթոդիկային ներկայացվող պահանջները

Հաստատություն՝ Ծաղկաձոր համայնքի, Մեղրաձոր գյուղի Լ. Գալստյանի անվան ՆՈՒՀ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Արևիկ Ղազարյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն ----------3-4 էջ
Գլուխ 1.Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը----------5-10էջ
ԳԼՈՒԽ 1.1 Նախադպրոցական կրթության պետական չափորոշչի ընդանուր բնութագիր----------5-8 էջ
ԳԼՈՒԽ 1.2 Նախադպրոցական կրթական չափորոշչի կառուցվածքը.----------8-10 էջ
ԳԼՈՒԽ 2. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՄԵԹՈԴԻԿԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ ----------10-15 էջ
Գլուխ 2.1 Կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջներ. ընդհանուր բնութագիր ----------10-13 էջ
Գլուխ 2.2 Պարապմունքի պլան. այլընտրանքային նկարչություն վրձնանկարչություն----------13-16 էջ
Եզրակացություն----------17-18 էջ
Օգտագործված գրականության ցանկ----------19էջ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կրթություն ոչ թե ամբողջ կյանքի համար, այլև ամբողջ կյանքում»

Հետազոտական աշխատանքը ունի <<Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը և կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջներ>> ընդհանուր վերնագիրը: Աշխատանքը բաղկացած է երկու գլխից, որոնք էլ իրենց հերթին բաժանվում են համապատասխան ենթագլուխների: Առաջին գլուխը ունի <<Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը վերնագիրը>> և բաղկացած է <<Նախադպրոցական կրթական չափորոշչի ընդհանուր բնութագիրը>> և <<Նախադպրոցական կրթական չափորոշչի կառուցվածքը>>ենթագլուխներից: Երկրորդ գլուխը ունի <<Կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջներ>> վերնագիրը և <<Կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջներ. ընդհանուր բնութագիր>>, <<Պարապմունքի պլան. այլընտրանքային նկարչություն վրձնանկարչություն>>, ենթագուխները:

Թեմայի արդիականություն. Առաջնորդվելով մեծ մարդասեր Նելսոն Մանդելայի <<Կրթությունը ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար>> խոսքերով՝ կրթության կարևորությունը առանցքահեն է: Կրթությունը յուրաքանչյուր պետության պահպանման, զարգացման և քաղաքակրթական աստիճանակարգման հիմքն է:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպման հիմքը՝ կրթության զարգացման պետական ծրագիրն է: Կրթական ոլորտը կանոնակարգվում է ընդունված հանրակրթական չափորոշչին համապատասխան, որը կազմվում է հաշվի առնելով ազգային դիմագիծը, ժամանակակից թելադրող պահանջները՝ մրցունակությունը:

Օգտագործված գրականության ցանկ. Հետազոտական աշխատանքը գրելիս օգտվել եմ Հասմիկ Միտոյանի <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի

համար>>[1], Հ. Միտոյանի, Լ. Սմբատյանի, Լ. Սարգսյանի հեղինակությամբ <<Մանկապարտեզի միջին խմբի 4-5 տարեկանների կրթական համալիր ծրագիր>> ձեռնարկից[2], Լ. Սմբատյանի, Լ. Սարգսյանի <<Կերպարվեստի պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում>> [3] ուսումնամեթոդական ձեռնարկից, Ռ. Ծառուկյան, Լ. Սմբատյան. Ս. Մանուչարյան. Ա. Գյուրջյան. Մ. Մկրտչյան, <<3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակեևպումն այլընտրանքային մոդելներով>> Երևան. 2018թ.[4]:

Հաշվի առնելով ինտերնետի զարգացվածությունը և առկա նյութերի բազմազանությունը՝ աշխատանքը գրելիս օգտվել եմ ինտերնետային տարբեր աղբյուրներ:

---

[1] Հ. Միտոյան, <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>>, <<Մարի հրատարկչություն>>, Երևան, 2020:

[2] Հ.Միտոյան, Լ. Սմբատյան, Լ. Սարգսյան, <<Մանկապարտեզի միջին խմբի 4-5 տարեկանների կրթական համալիր ծրագիր>> Երևան, 2016թ:

[3] Լ. Սմբատյան, Լ. Սարգսյան, <<Կերպարվեստի պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում ուսումնամեթոդական ձեռնարկ>>, Երևան, 2016թ:

[4] Ռ. Ծառուկյան, Լ. Սմբատյան. Ս. Մանուչարյան. Ա. Գյուրջյան. Մ. Մկրտչյան, <<3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակեևպումն այլընտրանքային մոդելներով>> Երևան. 2018թ.:

ԳԼՈՒԽ 1. Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը

ԳԼՈՒԽ 1.1 Նախադպրոցական կրթության պետական չափորոշչի ընդանուր բնութագիր

Նախադպրոցական կրթության բնագավառը կարգավորում է ՀՀ Սահմանադրությամբ, <<Կրթության մասին>>, <<<Հանրակրթության մասին>>, <<Տեղական ինքնակառվարման մասին>>, <<Երեխայի իրավունքների մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքներով, ընտանեկան օրենսգրքով, այլ օրենքներով և իրավական ակտերով[5]:

Չափորոշիչը կանոնակարգող փաստաթուղթ է, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները[6]:

Չափորոշիչին համապատասխան մշակվում են կրթական ծրագրեր, կանոնակարգող ակտերի նախագծեր, ուղեցույցներ, երաշխավորություններ, հաղորդաշարեր: Չափորոշչի հիման վրա կատարվում են դիտարկումներ և այլն: Այսինքն՝ չափորոշիչը համարվում է հայեցակարգերի, ծրագրերի (այդ թվում նաև վերապատրաստման տարբերակված ծրագրերի), մեթոդական ուղեցույցների մշակման, դրանց գործնականում ներդրման և ինչպես վերը նշվեց, երեխայակենտրոն կրթության իրականացման հիմք: Չափորոշիչը նաև կրթական հիմնական ծրագրերի նպատակների իրագործումը ցույց տվող չափանիշների կատարման ընդհանուր մակարդակն է, երեխայակենտրոն կրթության հիմքը, որը հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու երեխաների անձը, հենվելու երեխաների ուժեղ կողմերի վրա և խթանելու համատեղ ուսումնառություն: Չափորոշիչը որոշակի է, հասանելի, իրատեսական, համապարփակ և ժամկետային: Չափորոշիչը նպատակաուղղված է նախադպրոցական տարիքի երեխայի իմացական շարժառիթների խթանմանը, նրա ինքնաճանաչման, ինքնադրսևորման,

[5] Տես՝ ՀՀ օրենսդրությունը նախադպրոցական կրթության մասին, հոդված 2: https://e-draft.am (մուտք՝ 14.12.2022թ.)

[6] Տես՝ Տեղեկություններ նախադպրոցական կրթության չափորոշիչների մասին: https://edu.nk.am (Մուտք՝ 15.12.2022թ.)

համակողմանի և ներդաշնակ զարգացման ապահովմանը, առողջ կենսակերպի հիմքերի ձևավորմանն ու սոցիալականացմանը: Չափորոշիչի որակական պահանջները սահմանվում են ըստ տարիքի և զարգացման ոլորտների այնպես, որ հասանելի լինի անապահով ընտանիքներին:

Նախադպրոցական կրթության ծրագրերը մշակվում են չափորոշչին համապատասխան և դիտարկվում որպես հանրակրթության բաղադրիչ՝ ապահովելով երեխայի կրթության շարունակությունը: Նախադպրոցական կրթության չափորոշիչներով սահմանվում են այն անհրաժեշտ պայմանները, որոնցում կարող են լիարժեքորեն իրացվել երեխայի ազատ և համակողմանի զարգացման, նրա խնամքի, առողջության պահպանման ու ամրապնդման գործընթացները:

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը (այսուհետ՝ չափորոշիչ) հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը[7]:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմք: Չափորոշիչի ներդրումը պարտադիր է նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար:

Չափորոշչի ձևավորման հիմնական սկզբունքները

- Երեխաները ակտիվ սովորողներ են և ուզում են հասկանալ այն աշխարհը, որտեղ ապրում են,
- Երեխաները սովորում են խաղի միջոցով և խաղում,
- Իրենց գիտելիքները և արժեքները երեխաները կառուցում են հասակակիցների, ծնողների և այլ մեծերի հետ փոխհարաբերությունների, ինչպես նաև ֆիզիկական և հասարակական միջավայրի ակտիվ ուսումնասիրությունների միջոցով,
- Ընտանիքները /ծնողները/ երեխայի առաջին և կարևոր ուսուցիչներն են,

[7] Տես՝ Տեղեկություններ նախադպրոցական կրթության չափորոշիչների մասին: https://edu.nk.am (Մուտք՝ 15.12.2022թ.)

- Չկա իրար նման երկու երեխա: Երեխաների սեփական փորձը, վերաբերմունքը, հնտությունները և սովորելու ոճը ազդում են նրանց ուսումնառության վրա:

Չափորոշչի ձևավորման հիմնական սկզբունքները տրված են հանրակրթության պետական կրթակարգում: Դրանք են[8]՝

- երեխաների զարգացման առանձնահատկությունների հաշվառում, կրթական աշխատանքի անհատականացման ապահովումը,
- երեխաներին ներկայացվող պահանջների և նրանցից ունեցած ակնկալիքների հստակ սահմանումը, մտքի և խոսքի ազատ դրսևորման ապահովումը,
- ուսումնադաստիարակչական գործունեությունը պլանավորելիս համալիր, բազմակողմանի և ներդաշնակ մոտեցման, խաղի գերակայության և խաղային գործունեության ապահովումը,
- զարգացնող առարկայական և ֆիզիկական միջավայրի ստեղծման կարևորումը
- ուսումնադաստիարակչական ծրագրերում խոսքի զարգացման, մայրենի լեզվով հաղորդակցվելու, տրամաբանական մտածողության, ինքնուրույն գործունեության տարբեր ձևերի տիրապետման, ֆիզիկական, բարոյագեղագիտական, հայրենասիրական, բնապահպանական, աշխատանքային դաստիարակության ապահովումը,
- բարեկիրթ վարքի դաստիարակման, ստեղծագործական ունակությունների, ընդունակությունների և հնարամտության առողջ սովորությունների զարգացման ապահովումը,
- ուսումնադաստիարակչական գործընթացում ընտանիքի գործուն դերի ապահովումը, ծնողների ներգրավումը,
- տարրական դպրոց երեխայի սահուն անցման ապահովումը:

Չափորոշչին համապատասխան՝

1. Ստեղծվում է երեխաների անվտանգության, խնամքի ու կրթության համար անհրաժեշտ միջավայր, այդ թվում՝ շենքային ու սանիտարահիգիենիկ պայմաններ:

[8] Տես՝ Տեղեկություններ նախադպրոցական կրթության չափորոշիչների մասին: https://edu.nk.am (Մուտք՝ 15.12.2022թ.)

2. Մշակվում են նորմատիվ ակտերի նախագծեր, նախադպրոցական կրթության ծրագրեր, ուսումնամեթոդական փաստաթղթեր և նյութեր, այդ թվում՝ երեխաների ծնողների և խնամողների համար երաշխավորություններ, ուղեցույցներ, հանրամատչելի գրքույկներ, պատրաստվում են հեռուստատեսային և ռադիոհաղորդումներ:
3. Ստեղծվում են միջին և բարձրագույն մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրեր և պլաններ:
4. Իրականացվում է նախադպրոցական կրթության բնագավառում աշխատող ղեկավար, մանկավարժական կադրերի ու սպասարկող անձնակազմի պատրաստումը, որակավորումը, մասնագիտական կատարելագործումը և ատեստավորումը:
5. Նախագծվում և արտադրվում են երեխաների տարիքային ու ֆիզիոլոգիական առանձնահատկություններին համապատասխան ուսումնական և կենցաղային գույք, խաղալիքներ, դիտողական նյութեր, իրականացվում է դրանց փորձաքննությունը:
6. Ուսումնասիրվում, վերահսկվում և գնահատվում է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների գործունեությունը:
7. Դիտարկվում, չափորոշվում-հաշվառվում է երեխայի ֆիզիկական, մտավոր, հոգևոր-հուզականային /էմոցիոնալ/ զարգացման ընթացքն ու մակարդակը:
8. Իրականացվում է պետական և համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը:

Երեխաները լավ են սովորում այն միջավայրում, որտեղ բավարարվում են նրանց ֆիզիկական և հոգեբանական կարիքները, որտեղ նրանք իրենց պաշտպանված են զգում, գնահատվում են որպես յուրահատուկ անհատներ և ակտիվորեն ներգրավվում հմտություններ և գիտելիքներ ձեռք բերելու նպատակով կազմակերպված խաղերում և աշխատանքներում:

Նախադպրոցական կրթության չափորոշիչը կազմում է վաղ մանկության զարգացման ընդհանուր չափորոշչի բաղադրամաս և սահմանում նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակության նախագծման հիմնական ուղղությունները:

Այսպիսով չափորոշչի հիման վրա աշխատանքը ակնկալում է միասնական հենքային դաշտի ստեղծում, կրթական ոլորտի զարգացում և նորացում, կադրերի

մասնագիտական կատարելագործում, հիմնական արժեքային հարաբերությունների ձևավորում և այլն:

ԳԼՈՒԽ 1.2 Նախադպրոցական կրթական չափորոշչի կառուցվածքը.

Նախադպրոցական կրթական չափորոշիչների բովանդակությանը պայմանականորեն տարանջատված է ոլորտ-տիրույթների և բաղադրիչների: Չափորոշչի ձևավորման հիմնական սկզբունքներն են՝ երեխաների զարգացման և անհատական առանձնահատկությունների հաշվառումը, խաղի գերակայությունը և խաղային գործունեության, կրթական աշխատանքների անհատականացումը և պլանավորումը, մտքի և խոսքի ազատ դրսևորումը, ծնողների ներգրավումը մանկապարտեզի առօրյայում, երեխաների սահուն տարրական դպրոցի անցման կազմակերպումն ու իրականացումը, ստեղծագործական ունակությունների զարգացումը, մասնավոր մեթոդիկաների տիրապետումը, զարգացնող առարկայական և ֆիզիկական միջավայրի ապահովումը: Չափորոշիչով սահմանված կրթության բովանդակության հասանելիությունն ապահովվում է զարգացման հիմնական ուղղություններին համապատասխան հետևյալ բաղադրիչներով՝ գիտելիք, կարողություն, հմտություն, արժեքային համակարգ:

Նախադպրոցական կրթության պետական կրթական, զարգացման և միջավայրային չափորոշիչները կազմում են վաղ մանկության զարգացման ընդհանուր չափորոշչի բաղադրամասեր և սահմանում նախադպրոցական երեխաների կրթական ծրագրերի բովանդակության նախագծման հիմնական ուղղությունները: Չափորոշչում նախադպրոցական կրթության բովանդակությունը ներկայացվում է պայմանականորեն տարանջատված կրթադաստիարչական ոլորտ-տիրույթների և բաղադրիչների միջոցով:

Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է:

Չափորոշիչը ներառում է[9].

1) ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները.

[9] Տես՝ Տեղեկություններ նախադպրոցական կրթության չափորոշիչների մասին: https://edu.nk.am (Մուտք՝ 15.12.2022թ.)

2) երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը.

3) երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը.

4) նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառական և երեխայակենտրոն միջավայրի չափանիշները, որոնք հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը.

5) նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի անվտանգ միջավայրի և աղետներին պատրաստվածության չափանիշները:

4. Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը. հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը:

5. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի իրականացումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից:

6. Ըստ չափորոշչի, մշակվում են միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների նախադպրոցական ֆակուլտետների (բաժինների) ուսումնական ծրագրեր և վերապատրաստումների թեմատիկ պլաններ, ծնողական կրթության ծրագրեր:

Չափորոշիչների կառուցվածքը[10]

- Ոլորտները (ուսումնառության զարգացման ուղղությունները):
- Ենթաոլորտները (տյալ ոլորտի բաղկացուցիչ մասերը):
- Չափորոշիչները սահմանում են տվյալ ենթաոլորտում երեխայից ակնկալվող վարքագիծը:
- Ցուցիչները նշում են, թե երեխան ինչ գիտի և ինչ է անում կամ ինչպիսի դիտարկելի վարքագիծ է դրսևորում:
- Օրինակները բացատրում են յուրաքանչյուր ցուցչի իմաստը:

Չափորոշիչները դասակարգված են ըստ հետևյալ վեց ոլորտների[11]

[10] Նախադպրոցական կրթության պետական չափորորոշիչ. Ընդհանուր դրույթներ: https://arlis.am (Մուտք՝ 15.12.2022թ.)

- Շարժողական
- Խոսք և լեզու
- Իմացական
- Հուզական, անձնային և սոցիալական զարգացում
- Ինքնասպասարկում և անվտանգություն
- Վերաբերմունք սովորելու նկատմամբ:

[11] Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչ. Ընդհանուր դրույթներ: https://arlis.am (Մուտք՝ 15.12.2022թ.)

ԳԼՈՒԽ 2. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՄԵԹՈԴԻԿԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Գլուխ 2.1 Կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջներ. ընդհանուր բնութագիր

Գեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված երեխայի գեղագիտական ընկալումների, կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը:

Ծրագրային նպատակն է ամրապնդել և կատարելագործել երեխաների կերպարվետային գործունեությունը՝ գծանկարի, գունանկարի, ծեփակերտման, ապլիկացիայի կառուցողական գործունեության միջոցով: Կերպարվեստի ծրագրային խնդիրների հաջող լուծումը պայմանավորված է ամենից առաջ այն մթնոլորտով ու զարգացնող միջավայրով, որոնք ստեղծում է դաստիարակը՝ հաշվի առնելով իր խմբի երեխաների անհատական հոգեբանական առանձնահատկությունները, նախասիրությունները, կարիքները[12]:

[12] Ռ. Ծառուկյան, Լ. Սմբատյան. Ս. Մանուչարյան. Ա. Գյուրջյան. Մ. Մկրտչյան, <<3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակեևպումն այլընտրանքային մոդելներով>> Երևան. 2018թ. էջ 68-75:

Կերպարվեստային գործունեության նպատակն է երեխաների մեջ[13]՝

- Զարգացնել գեղագիտական ընկալումը:
- Զարգացնել գեղագիտական ճաշակը:
- Զարգացնել երևույթների ու առարկաների նկատմամբ հուզազգայական վերաբերմունք:
- Զարգացնել գեղարվեստաստեղծագործական ունակությունները:

Կերպարվեստային գործունեության խնդիրներն են[14]՝

- Ընդլայնել երեխաների պատկերացումներն ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային արվեստ ստեղծագործությունների վերաբերյալ, զարգացնել հետաքրքրասիրություն գեղանկարի, նատյուրմորտի, պատկերազարդ գրքերի, դեկորատիվ կիրառական արվեստ, նմուշների նկատմամբ՝ որպես երեխաների գեղարվեստական ստեղծագործական աշխատանքի սկիզբ:
- Շարունակել զարգացնել գեղագիտական զգացողությունը, երևակայությունը, գեղարվեսագիտական ունակությունները, առարկաները դիտելու և հետազոտելու կարողությունները, այդ թվում ձևավորել նաև կերպարային պատկերացումներ՝ շոշափելու օգնությամբ:
- Շարունակել զարգացնել հետաքրքրասիրություն կերպարվեստային գործունեության տեսակների նկատմամբ, տարբեր արտահայտչամիջոցներով միևնույն ձևը կամ կերպարը վերարտադրելու ունակությունները: Ընդլայնել և զարգացնել պատկերացումները կենցաղի, տրանսպորտի, մրգերի, բանջարեղենի ծաղիկների, ծառերի, կենդանիների, բնության երևույթների, նաև տոների և ու իրադարձությունների վերաբերյալ:
- Երեխաների ուշադրությունը հրավիրել տարբեր առարկաներին բնորոշ հատկությունների՝ դրանց ձևերի, ուրվագծի, առանձին մասերի, գույների, նախշերի և գեղրվեստական արտահայտչականության վրա:
- Սովորեցնել տարբեր նյութերով բազմամաս կոմպոզիցիա ստանալու ձևերն ուեղանակները: Օգնել երեխաներին ընտրելու թեմաներ՝ խմբային աշխատանքների համար: Սովորեցնել ինքնուրույն գտնել պարզ թեմաներ՝ շրջակա միջավայրից, գեղարվեստական գրքերից: Երեխաների համար

[13] Լ. Սմբատյան, Լ. Սարգսյան, <<Կերպարվեստի պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում ուսումնամեթոդական ձեռնարկ>>, Երևան, 2016թ, էջ 4:
[14] Տես՝ նույն տեղում:

ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր, ինքնուրույն աշխատելու, ստեղծագործելու, գեղարվեստական գործունեությամբ զբաղվելու համար:

Այսպիսով կերպարվեստային բուն գործընթացը՝ երեխայի սիրո, հակումների, հույզերի ու տրամադրության արտացոլումն է, ինչը երեխային ձերբազատում է լարվածությունից ու հանդարտություն պարգևում: Փոքրիկի զգացմունքի արտահայտումն է, շրջապատը ճանաչելու կարողության՝ աշխարհաընկալման զարգացումը:

Գլուխ 2.2 Պարապմունքի պլան. այլընտրանքային նկարչություն վրձնանկարչություն

Այժմ կանրադառնանք ոչ ավանդական նկարչությանը՝ որպես այլընտրանքային նկարչության տեսակ: Ոչ ավանդական նկարչությունը բավականին հետաքրքիր նկարչության տեսակ է[15]:

Լինում են երեք տեսակի.

- հարթ մակերեսով
- անհարթ մակերեսով
- տարբեր միջոցներով նկարչություն:

Ոչ ավանդական նկարչության գործընթացում շարունակվում է ուսուցողական և ճանաչողական գործընթացը: Ոչ ավանդական նկարչության համար խիստ անհրաժեշտ է հետևյալը.

Ներկանյութեր Գուաշ, ջրաներկ, բնական ներկանյութեր	Մակերես, տարբեր չափերի թուղթ, պատ, նկարակալ, գետին	Միջոցներ Մատիկներ, շտամպեր, կավիճ, ձողիկներ
Աշխատանքային բարենպաստ միջավայրը. ներկանյութեր, միջոցներ	Աշխատատեղ Խմբասենյակ, բակ տաղավար	Մաքրող միջավայր Խոնավ լաթեր, ջուր

Ստորև կներկայացնենք պարապմունքի պլան `այլընտրանքային նկարչությունից.

Տեսակը՝ վրձնանկարչություն

[15] <<Այլընտրանքային նկարչություն. Ոչ ավանդական նկարչություն>>, https://www.youtube , (Մուտք՝ 15.12.2022թ.):

Թեմա՝ այլընտրանքային նկարչություն. Նկարչություն ջրաներկով, մատներով

Նպատակը՝ զարգացնել մանր մոտորիկան, երևակայությունը, գունազգացողությունը, գեղագիտական ճաշակը, համբերատարությունը՝ սկսած գործը ավարտին հասցնելու կարողությունը,շարունակել զարգացնել գիտելիքները կենդանիների մասին:Դաստիարակել հոգատար վերաբերմունք կենդանիների հանդեպ:

Անհրաժեշտ պարագաներ՝ ջրաներկ, վրձիններ, խոնավ լաթեր,ծանոթ կենդանիների նկարներ, մեծ ստվարաթուղթ խմբակային աշխատանքի համար:

Պարապմունքի անցկացման մեթոդիկան. պարապմունքը կատարել խիկ համակարգով:

- Խթանման փուլ՝ զրուցել երեխաների հետ կենդանիների մասին, ցույց տալ կենդանիների նկարները, ամրապնդել գիտելիքները կենդանիների՝ նրանց ապրելակերպի մասին:
- Իմաստի ընկալման փուլ. առաջարկել ջրաներկով մատիկները ներկել՝իրենց ընտրած գույներով և տպել ստվարաթղթի վրա, ուշադրություն դարձնել երեխաների համագործակցությանը, աշխատել կոկիկ ու ուշադիր:
- Կշռադատման փուլ. ձեռքերը տպել իրարից քիչ հեռու ու տարբեր ուղղություններով, խմբով որոշել թե ինչ կենդանի կարելի է ստանալ այդ պատկերներից, ստանալ կենդանիների տեսքեր, խրախուսել երեխաների նախաձեռնողականությունը, սովորեցնել ուրախանալ սեփական

աշխատանքով, կենդանիների կողքին գրել երեխաների անունները՝ համաձայն տպված ձեռքերի, փակցնել խմբասենյակում:

Եզրակացություն

Կատարված հետազոտական աշխատանքից կարող ենք անել հետևյալ եզրահանգումները.

- Չափորոշիչը կանոնակարգող փաստաթուղթ է, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները
- Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը:
- Նախադպրոցական կրթության ծրագրերը մշակվում են չափորոշչին համապատասխան և դիտարկվում որպես հանրակրթության բաղադրիչ՝ ապահովելով երեխայի կրթության շարունակությունը: Նախադպրոցական կրթության չափորոշիչներով սահմանվում են այն անհրաժեշտ պայմանները, որոնցում կարող են լիարժեքորեն իրացվել երեխայի ազատ և համակողմանի զարգացման, նրա խնամքի, առողջության պահպանման ու ամրապնդման գործընթացները:
- Չափորոշիչը ունի ոլորտներ, ենթաոլորտներ և դասակարգվում է 6 ոլորտների՝ շարժողական, խոսք և լեզու, իմացական, հուզական, ինքնասպասարկում և անվտանգություն, վերաբերմունք սովորելու նկատմամբ:
- Գեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված երեխայի գեղագիտական ընկալումների, կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը:

- Կերպարվեստային գործունեության նպատակն է երեխաների մեջ զարգացնել գեղագիտական ընկալումը, գեղագիտական ճաշակ, երևույթների ու առարկաների նկատմամբ հուզազգայական վերաբերմունք, գեղարվեստաստեղծագործական ունակությունները:
- Ոչ ավանդական նկարչությանը այլընտրանքային նկարչության տեսակ է: Լինում է երեք տեսակի՝ հարթ մակերեսով, անհարթ մակերեսով, տարբեր միջոցներով նկարչություն:
- Ոչ ավանդական նկարչության գործընթացում շարունակվում է ուսուցողական և ճանաչողական գործընթացը:

  Ներկայացված պարապմունքը անցկացրել եմ բավականին արդյունավետ,երեխաները աշխատում էին մեծ ոգևորությամբ:Ցանկալի կլիներ ձեռք բերեինք համապատասխան գրականություն երեխաների կրթությունն ու դաստիարակությունը էլ ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Լ. Սմբատյան, Լ. Սարգսյան, <<Կերպարվեստի պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում ուսումնամեթոդական ձեռնարկ>>, Երևան, 2016թ:
2. Հ. Միտոյան, <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>>, <<Մարի հրատարկչություն>>, Երևան, 2020:
3. Հ.Միտոյան, Լ. Սմբատյան, Լ. Սարգսյան, <<Մանկապարտեզի միջին խմբի 4-5 տարեկանների կրթական համալիր ծրագիր>> Երևան, 2016թ:
4. Ռ. Ծառուկյան, Լ. Սմբատյան. Ս. Մանուչարյան. Ա. Գյուրջյան. Մ. Մկրտչյան, <<3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակեևպումն այլընտրանքային մոդելներով>> Երևան. 2018թ.:

Ինտերնետային կայքեր

5. https://e-draft.am
6. https://edu.nk.am
7. https://arlis.am
8 . https://www.youtube